«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում»

Դաստիարակ՝ Անի Պետրոսյան

Մանկապարտեզ՝ « Բջնի մանկապարտեզ » ՀՈԱԿ

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Ներածություն 3
II. ԳԼՈՒԽ 1 5
1.1 Ի՞նչ է ծեսը, նրա դերն ու նշանակությունը 5
1.2 Հայ ազգային ծեսերն ու տոները, Նոր տարի 6
1.3 Տյառնընդառաջ 7
1.4 Բարեկենդան 8
1.5 Ծաղկազարդ 9
1.6 Զատիկ 11
1.7 Վարդավառ 12
III. ԳԼՈՒԽ 2 14
2.1 Հետազոտության ընթացքը 14
2.2 Օրինակելի պարապմունք 17
2.3Դիտարկման արդյունքները 22
IV. Եզրակացություն 25
V. Գրականության ցանկ 26

I. Ներածություն

Մենք ինքներս պետք է հավատանք այն ամենին, ինչը սովորեցնում ենք մեր երեխաներին:

Վուդրո Վիլսոն

Ծեսը հունարեն՝ /ritual/ դա աստվածապաշտական գործողությունների եւ արարողությունների շարք է, որով կրոնական կառույցը կամ հավատացյալները արտահայտում են իրենց նվիրումը հոգևոր, գերագույն սկզբին: Այն հավատացյալների վրա ազդելու միջոց է: Դարերի ընթացքում հարատևած ծեսերը իրենց ազդեցությունն են թողել առօրյա կյանքի, կենցաղի, հոգեբանության և աշխարհայացքի վրա:

Ինձ գրավել են ազգային ծեսերն ու տոները, քանի որ դրանցում արտացոլվում են ժողովրդի կյանքն ու կենցաղը, բարքերն ու հավատալիքները: ԵՎ ճշմարիտ, հայեցի սերունդ դաստիարակելու համար, մենք պետք է, դեռ մանկապարտեզից մեր մատաղ սերնդին ծանոթացնենք, կապենք ազգապահպան այդ արմատներին: Որպեսզի երեխան հետագայում հասկանալով՝ տոնի հայկական Տիառնընդառաջը և ոչ թե օտարի Հելոուինը:

Հետազոտությանս նպատակն է՝ կարևորել ազգային ծեսերը,տոները և դրանց ուղեկցող երգերը, պարերը,ասույթներն ու խաղերը և այս ամենը կազմակերպելու գործընթացում զարգացնել երեխաների խոսքը,լեզվամտածողությունը, սոցիալական, հուզական և մտավոր կարողությունները: Վեր հանել հայկական գեղեցիկ սովորույթները, կենցաղային ավանդույթները, ինչպես նաև հայկական կերակուրների պատրաստումն ու

հյուրասիրությունը և երեխաներին ակտիվորեն ներգրավել դրանց իրականացման գործընթացում:

Աշխատանքիս մյուս կարևոր նպատակն այն է, որ երեխան դառնա ոչ միայն տեղեկատվություն սպառող, այլ նաև տեղեկատվության աղբյուր: Սովորողը ծեսը /տոնը փոխանցում է մանկապարտեզից տուն, տանից մանկապարտեզ և դառնում է ազգայինի տարածողը: Ծեսը ժամանակի կրողն է և եթե ամեն սերունդ ծեսին իր կյանքից մի բան չավելացնի, այն աստիճանաբար կմարի:

Կարևորում եմ նաև, սովորեցնել երեխաներին պատրաստել ծիսական իրեր, որով կզարգանա նրանց ստեղծագործական երևակայությունը, ճաշակը, մտածողությունը:

Հետազոտական աշխատանքը գրելիս ուսումնասիրել եմ Հրանուշ Խառատյանի-Առաքելյանի «Հայ ժողովրդական տոները», որտեղ ամենայն մանրամասնությամբ ներկայացվում են դրանք: Հետազոտական աշխատանքը կազմված է ներածական մասից, երկու գլխից, եզրակացությունից և գրականության ցանկից: Առաջին գլխում ներկայացրել եմ, թե ինչ է ծեսը, որն է նրա դերն ու նշանակությունը: Ապա մանրամասն ներկայացրել եմ հայկական տոները: Երկրորդ գլխում ներկայացրել եմ թեմային համապատասխան մեկ օրինակելի պարապմունք՝ մանկապարտեզի ավագ խմբում

II.

ԳԼՈՒԽ 1

1.1 Ի՞նչ է ծեսը, նրա դերն ու նշանակությունը

Մշակույթը չէր կարող պահպանվել և սերնդեսերունդ փոխանցվել, եթե չլինեին պատմության ընթացքում ձևավորված ծեսերը: Ծեսը կրոնական արարողություն է, որին հավատացյալները վերագրում են մոգական և խորհրդավոր հատկություններ: Այն վերարտադրում է ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները, ազգային կյանքի էական կողմերը, էթնոսին բնորոշ առանձնահատկությունները:

Հնում հայերը այնքան էին հավատում ծեսերի զորությանը, որ նույնիսկ հնարել էին Անձրևաբեր ու Անձրևախափան ծեսերը, որպեսզի դրանց միջոցով կարգավորեին բնության երևույթները:

Հայ եկեղեցին ծեսը սահմանում է, որպես աղոթքի կարգ: Մեր եկեղեցին ծեսերը համաձայնեցրել է Աստվածաշնչյան մեկնություններին և քրիստոնեական ուսմունքին: Հայոց եկեղեցում ծեսերը հաստատել, սահմանել և կարգավորել են կաթողիկոսները: Այդ գործում մեծ ներդրում են ունեցել Գրիգոր Լուսավորիչը և Ներսես Մեծը: Ծեսերի գիրքը հին հայոց մեջ կոչվել է Ծիսարան կամ Մաշտոց:

Ծեսերը ունեն պատմական և ճանաչողական մեծ արժեք: Բացի կրոնական ծեսերից կան նաև ազգային, էթնիկական, սովորութային ծեսեր: Հայտնի են ծիսական շատ երգեր ու խաղեր:

Հայ ազգային տոնեռն ունեն ծիսական արարողակարգ, դրանցից են Նոր Տարին, Սուրբ Ծնունդը, Տեառնընդառաջը, Բարեկենդանը, Ծաղկազարդը, Զատիկը, Համբարձումը, Վարդավառը:

1.2 Հայ ազգային ծեսերն ու տոները, Նոր տարի

Հնում այս տոնը հայտնի էր նաև Ամանոր, Տարեմուտ, Տարին Գլուխ, Կաղանդ անուններով: «Կաղանդ» բառի բացատրությունը լավագույնս տվել է Անանիա Շիրակացին իր «Տիեզերագիտություն և տոմար» գրքում.«Զինչ է կաղանդ և կաղանդիկոս: Կաղանդ ամսամուտ է և կաղանդիկոս նախասկզբնակ օր տարույն»: Տոնին նախապատրաստվելիս մեծ կարևորություն են դարձրել տան մաքրությանը, անպետք իրերի դեն նետմանը: Բնակարանը շողում էր մաքրությունից և զարդարվում էր չարխաբանի և բարեբեր զարդարանքով: Տոնին դնում էին չորացրած ու թարմ մրգեր, պաստեղներ, ընկուզերշիկներ և լոբուց, սիսեռից, ոսպից, բրնձից ու ձավարեղենից պատրաստված կերակուրներ: Ալդ օրը անպայման հաց էին թխում, Նոր տարին պետք էր նոր հացով սկսել: Թխում էին նաև «Տարի հաց» գաթան, որը Նոր տարվա առավոտյան հանում էին դուրս և ասում. «Դովլաթ, սարն էս, ձորն էս,արի տուն»[1], այսպիսով տուն կանչելով հաջողությանը: Թխում էին նաև մարդակերպ ու կենդանակերպ թխվածքներ՝ Ասիլ-Բասիլներ: Որպես տոնածառ զարդարում էին ձիթենու ճյուղերը՝ «Կաղանդի ծառը»: Պահպանվել են բազմաթիվ խաղիկներ Ամանորին նվիրված:

Բարի եկար, Նոր տարի,

[1] Հ. Խառատյան-Առաքելյան «Հայ ժողովրդական տոներ», էջ 25

Տուր մեզի ցորեն, գարի,
Լե, լե, լե, լե ախ լե,լե,
Մեր փեթակն ալիր կուզե,
Լե,լե,լե,լե,[2] ...

1.3 Տյառնընդառաջ

Տյառնընդառաջ նշանակում է «ելնել Տիրոջն ընդառաջ», տարածված է նաև Տերընդեզ, Տըրնդեզ, Տըրընտես ձևերը, որոնք ծագել են «Տերն ընդ ձեզ» անվանումից: Նախաքրիստոնեական Հայաստանում այս տոնը նվիրված էր արևի աստված Միհրին, իսկ մեկ այլ բանահյուսական պատումում այն կապել են կրակի աստված Վահագնի հետ:

Փետրվարի 13-ի երեկոյան ժամերգությունից հետո եկեղեցում կատարվում է մոմերի օրհնություն, որոնք հետո բաժանում են ժողովրդին: Այդ մոմերով հետո եկեղեցու բակում խարույկ են վառում, որը հանդիսանում է Տերընդեզի գլխավոր խորհրդանիշը: Մարդիկ նաև եկեղեցուց ճրագ են տանում և այդ ճրագից կրակ վառում իրենց բակում: Ապա խարույկի շուրջը կատարվում են ազգային երգերով ու պարերով համեմված տոնակատարություններ: Հետո խարույկի մեղմանալուն զուգընթաց՝ սիրահար զույգերը կամ նորապսակները ձեռք ձեռքի բռնած, թռչում են կրակի վրայով,ապա նույնը անում է տոնակատարության ցանկացած մասնակից:

[2] Նույն տեղում էջ 33

Տեառնընդառաջի տոնական կերակուրներից են՝ փոխինձը, չամիչը, աղանձը, ընկույզը, բոված սիսեռը:

Հայ մեծ բանահավաք Գարեգին Սրվանձտյանցը վկայում է, որ «կաղանդին կամ տերեգլխին այնքան հանդիսավոր չէ, որքան այսօր. մեծամեծ խնջույքներ և ուրախություններ կը կատարեն, տաղերով, երգերով, պարերով, ուտելիքով և ըմպելիքով կը զվարճանան»[3]:

Բերենք շրջող աշուղների երգերից մի փոքրիկ հատված:

-Կոյսը սիրեմ ես , կոյսը,
Կըլմանի ժամու լոյսը,-
-Տերնտես, մարդ ինձի տաս,
Ես խնդամ ու դուն լաս:

Տերընդեզ՝ դարմանը կես,
Առ հաց ու կես, ելիր գեղես,
Տերընդեզ, մխի դին տես,
Մէ փութ ցանես՝ հարյուր քաղես[4]:

1.4 Բարեկենդան

[3] Հ. Խառատյան-Առաքելյան «Հայ ժողովրդական տոները», էջ 56
[4] Նույն տեղում էջ 56

Բարեկենդան նշանակում է բարի կենդանություն: Տոնը կապված է գարնան զարթոնքի հետ: Բարեկենդանը տևում էր երկու շաբաթ և ավարտվում էր Մեծ պասով: Տոնակատարությունը ուղեկցվում էր պարերով, խաղերով, զվարճահանդեսներով, հրապարակային խնջույքներով և այլն: Տոնական ուտելիքների մեջ նախապատվությունը տրվում էր մսեղենին, կաթնեղենին, յուղի առատությանը: Այնքան էին ուտում, որ Բարեկենդանը երբեմն անվանում էին «փորեկենդան». -

Բարեկենդան, փորեկենդան,

Բարեկենդան օրեր է,

Խելքս գլխես կորեր է[5]...

Բարեկենդանի վերջին օրը ուտում էին խաշած ձու, ասելով. «բերաններս փակում ենք սպիտակ ձվով: Աստված արժանացնի կարմիր ձվով բաց անելու»,- նկատի ունենալով, որ ահա սկսվում է Մեծ պասը: Բարեկենդանի տարածված խաղերից էր ճոճախաղը, լախտախաղը, զանազան գնդակախաղեր, փայտախաղեր:

1.5 Ծաղկազարդ

Ամենագեղեցիկ, լուսավոր, ուրախաշատ տոներից է Ծաղկազարդը: Նորապսակ երիտասարդները, նշանված տղաները շաբաթ կեսգիշերին եկեղեցին զարդարում էին բողբոջած ուռենիների ճյուղերով, ապա գալիս էին երեխաները՝ ձեռքներին զանազան ճռռացող ինքնաշեն խաղալիքներ՝ ճեռեր,

[5] Նույն տեղում էջ 77

կարկաչաներ: Ծաղկազարդին ձմեռային հագուստները փոխվում էին գարնանայինով: Գալիս էր քահանան, եկողները շրջապատում էին ուռենու ծառը, իրենց հետ բերած մոմերը վառելով՝ կպցնում դրանց ճյուղերին և այդ պայծառ լույսերի տակ էլ կեսգիշերին սկսվում էր ուռենու ճյուղերի օրհնելու ծեսը: Հաճախ հենց այդ ժամանակ, կեսգիշերին, եկեղեցու բակում տեղի էին ունենում հանպատրաստի նշանադրություններ: Ապա կանայք, վառված մոմերով և ուռենու ճյուղերով դուրս գալով եկեղեցուց, շտապում էին գերեզմանատուն, մոմերը դնում իրենց հանգուցյալի գերեզմանաքարին, իսկ օրհնած ճյուղերը տուն էին տանում: Այդ ճյուղերը մինչև հաջորդ Ծաղկազարդ օգտագործվում էին որպես չարխափան և առատացնող միջոց՝ լցնելով մթերքի կարասները, ամբարները, թեթևակի խփում էին անասուններին, միմյանց մեջքին և ասում «Մեջքը տեղը, կամքը տեղը» կամ « Քամու տեղ, սրտի դեղ»[6]: Ծաղկազարդին բոլորը պիտի «հատիկ» ուտեին: Այդ օրը երեխաները խմբեր կազմած, տոպրակ, դույլ առած,Ծաղկազարդի երգեր երգելով, շրջում էին տնետուն և ստանում էին ձու ու հատիկեղեն: Սա էլ մի փոքրիկ հատված Ծաղկազարդի պարզունակ երգերից.

Կարկաչա, կարին քյաչա,
Սև եզան, սև սամոդա,
Կարմիր կովը շատ եղ կուտա,
Ով որ ընձի հավկիթմ տա՝
Աստված իրեն հազար թող տա:

Այսպես երեխաները շրջում ու երգում էին այնքան, մինչև դույլերը ձվով էին լցվում, դրա փոխարեն տալիս էին օրհնած ճյուղեր:

[6] Հ. Խառատյան-Առաքելյան «Հայ ժողովրդական տոները», էջ 124

Ծաղկազարդին խաղում էին ներկած ձողերով խաղեր, իսկ աղջիկների խմբերը պատրաստում էին տոնի խորհրդանիշ Նուրի /Հուրի, Խուճկուրուրիկ, Չիչի-մամա/ տիկնիկը:

1.6 Զատիկ

Զատիկը հայերի մոտ տոնվել է ապրիլ ամսին՝ շատ ավելի վաղ , քան քրիստոնեությունն է: Այն կոչել են զատիկ, նկատի ունենալով, գարնան՝ ձմեռվանից զատվելը: Զատիկը բնորոշում է բնության զարթոնքը և բեղմնավորումը: Ձուն և կենաց ծառը խորհրդանշում էին նոր կյանքի սկիզբը, ինչն էլ հին հայերը կապում էին բնության մեռնող և հարություն առնող աստծու՝ Արայի հետ: Հետագայում այս տոնը քրիստոնեական ուսմունքին համապատասխանեցվեց և հանդես եկավ իբրև Հիսուս Քրիստոսի հարության տոն: Քրիստոնյաները Սուրբ Զատիկի օրը իրար ավետիս են տալիս, ասելով՝ «Քրիստոս հարյավ ի մեռելոց» և ստանում են «Օրհնյալ է հարությունը Քրիստոսի» պատասխանը: Զատիկի միջոցառման արարողությունը տևում է մեկ շաբաթ և յուրաքանչյուր օր կոչվում է Ավագ և իմաստավորվում է կոնկրետ գործով: Զատկի սեղանին դնում են կարմիր ձու, ձկնեղեն, փլավ, ձվով տապակած բանջարեղեն, վերջում ուտում են թանձր եփած թանով սպասը կամ կաթով եփած կորկոտաճաշը:

Սուրբ Զատիկի խաղերից է ձվախաղը, ձվագլորը, ձվակռիվը, աքլորակռիվը, գնդակախաղերը՝ «Սատանի փոս»,«Չիլիկ դաստա», որոնք ուղեկցվում են ծիսական պարերգերով: Վերջում հիշենք Զատիկի հետ կապված որոշ ասույթներ:

Ակլատիզը փետելով Զատիկը շուտ չես բերի:

ՈՒնեցողի համար ամեն օր Զատիկ է:

Կուշտ ուտելը Զատիկի իրիկունն է:

Կարմիր ձու տուր, կարմիր օր տամ:

Փիս մարդը Զատկին էլ փիս կլինի:

Ոչ տոն է, ոչ Զատիկ, խևն է հագել շալե շապիկ:

Էշի Զատկին, գելի Բարեկենդանին:

1.7 Վարդավառ

Վարդավառը հայոց եկեղեցու շարժական տոներից է: Այն կուչում են նաև «Այլակերպության» կամ «Պայծառակերպության» տոն: Տոնը այսպես կոչելը բացատրվում է Թաբոր լեռան վրա Քրիստոսի պայծառացած կերպարանքով, որը երևում է իր առաքյալներին: Հայոց մեջ Վարդավառը հնագույն արմատներ ունեցող տոներից է: Ըստ ավանդազրույցի, երբ Նոյ նահապետը իջնում է Արարատից, իր որդիներին պատվիրում է իրար վրա ջուր ցողել, որպեսզի ջրհեղեղի հիշատակը անմոռաց մնա մարդկանց մեջ:

Նշում են նաև, որ տոնը նվիրված էր Աստղիկ աստվածուհուն, որը Հայկ նահապետի ջրհեղեղից հետո ծնված դուստրն էր:

Վարդավառի մյուս խորհուրդը պտղաբերությունն է. ոմանք կարծում են, թե տոնը նվիրված է եղել Անահիտ դիցուհուն:

Վարդավառը ուխտագնացությունների տոն էր և որպես ուխտատեղի

ընտրվում էին լեռները, ջրերի ակունքները: Օրինակ, Զանգեզուրում Վարդավառի ամենասիրված ուխտավայրը Խուստուփն էր:

Մեծ իրադարձություն էր Տարոնի Ս. Կարապետի վանք կատարվող Վարդավառի համաժողովրդական տոնախմբությունը: Նոր Նախիջևանում Ս.Կարապետ ուխտի գնացածները յուրահատուկ հարգանք էին վայելում: Այս ուխտը ոչ այնքան եկեղեցուն, հավատի հետ կապված երևույթ էր, որքան՝ հայրենասիրության, հայրենիքին նվիրումի:

Վարդավառը ամենաուրախ, զանգվածային ու սիրված տոներից էր: Տոնի օրը գրեթե բոլորը հասկեր էին տանում եկեղեցի՝ խնդրելով, որ դաշտերը կարկուտից ու մորեխից անվնաս մնան և ասում էին. «Տեր պահպանիր մեզ Վարդավառի բուքից ու կարկուտից, Տերնտասի տաք ու շոգից»[7]: Ապա եկեղեցու բեմը և սեղանը զարդարում էին բազմաթիվ ծաղիկներով ու վարդի փնջերով: Վարդավառին ցորենի հասկերից հյուսում էին խաչբուռեր, որոնք նման էին կնոջ արտաքինի: Խաչբուռի մեջ երևում էր բերքի աստվածուհի՝ Անահիտի ծպտված կերպարը: «Վրթիվերի» կոչվող դեղնագույն ծաղիկներից էլ պատրաստում էին խաչ-փնջեր, որոնք դնում էին ցորենի կամ ալյուրի ամբարների վրա: Տարվա առաջին խնձորը ուտում էին Վարդավառին, ինչպես առաջին խաղողն ուտում էին Վերափոխման կամ Խաղողօրհնեքի տոնին: Ապա երեկոյան պատրաստում էին դեզեր, դրանք վառում էին ու դրանց մեջ խորովում էին խնձորներ և ուտում:

Վարդավառին կազմակերպվում էին գիշերային խարույկահանդեսներ, ջրախաղեր, ըմբշամարտի մրցույթներ, դաշտային զբոսախնջույքներ և այլն:

[7] Հ. Խառատյան-Առաքելյան «Հայ ժողովրդական տոները», էջ 203

III. ԳԼՈՒԽ 2

2.1 Հետազոտության ընթացքը

Հետազոտական աշխատանքս իրականացրել եմ ավագ խմբում: Խմբում կա երեսուն երեխա:

Ծեսի նախապատրաստական աշխատանքների ժամանակ շատ կարևոր եմ համարել ներգրավել երեխաներին, որպեսզի իրենք հաճույք ստանան աշխատանքային գործընթացից, իրենց ստեղծածից: Դա շատ է ոգևորում երեխաներին: Ինչ-որ բան ստեղծելու արդյունքում՝ երեխաների ինքնագնահատականը, ինքնավստահությունը մեծանում է:

Տոնի նախապատրաստական աշխատանքների ընթացքում երեխաները ներկում են, կտրում, սոսնձում, աշխատում են տարբեր նյութերի հետ, որի ընթացքում զարգանում է նրանց մանր մոտորիկան, երևակայությունը, հմտանում է ստեղծագործելու կարողությունը: Երեխաների հետ պատրաստել ենք «Կենաց ծառը» և այն զարդարելու համար պատրաստել ենք ավանդական զարդարանքներ՝ գունավոր թելերով զարդարված ընկույզներ, բնական չրերի շարաններ: Այդ պատրաստած ընկույզ-խաղալիքներից մեկական օրինակ երեխաները տարել են տուն, որպեսզի կախեն իրենց տոնածառերին: ԵՎ ամեն տարի, երեխաները տոնածառը զարդարելիս, դրանց շնորհիվ կվերհիշեն տոնը, ծեսերը, միասին կատարած մեր աշխատանքները:

Միասին խմբում պատրաստել ենք «Տարի հացը», որի մեջ թաքցրել ենք փայլաթիթեղով փաթաթած մետաղադրամը՝դովլաթը, ընթացքում խոսել ենք

դրա նշանակության մասին: Այս ամբողջ ընթացքում երեխաները խոսում են ծեսի մասին, քննարկում, մտքեր փոխանակում, համեմատում են մերօրյա տոնի հետ. Կաղանդը՝ Ամանորի, Կաղանդ պապը՝ Ձմեռ պապի, «Կենաց ծառը»՝ տոնածառի, նվեր-խորհուրդները՝ այժմյան գեղեցիկ փաթեթավորված նվերների հետ: Արդյունքում կարողանում են եզրահանգումներ անել, նշել, թե ծեսի որ մասը շատ հավանեցին, ինչը կուզեին փոխել: Նշեմ, որ երեխաները հավանել էին «Կենաց ծառը», բայց ցանկանում էին լույսեր ավելացնել՝ ժամանակակից մոտեցում դրսևորելով, շատ էին հավանել խաղերը: Ցանկանում էին ստանալ Ձմեռ պապիկի նվերները: Մեր աշխատանքների մասին երեխաները պատմում են ընտանիքի անդամներին, միևնույն ժամանակ մանկապարտեզում պատմում են տոնի վերաբերյալ շրջապատից լսած տեղեկությունները, համադրում են ու վերլուծություններ կատարում: ԵՎ այս ամենը իր դրական մեծ ազդեցությունն է ունենում երեխաների լեզվամտածողության վրա, նպաստում է խոսքի զարգացմանն ու հաղորդակցմանը, նրանց սոցիալական, հուզական և մտավոր կարողությունների զարգացմանը:

Ծիսական երգն ու երաժշտությունը նպաստում են երեխաների ոչ միայն խոսքի զարգացմանը, այլ նաև հուզական զարգացմանը: Ընտրված պարզունակ ծիսական երգերը երեխաները հեշտությամբ ու սիրով էին յուրացնում: Ազգայինը, ծիսական երգն ու պարը շատ դրական են ազդում երեխաների զգացմունքների վրա՝ առաջացնելով մեծ հրճվանք, բարություն, սեր ու ջերմություն: ԵՎ ըստ իս, հաշվի առնելով գենետիկ ժառանգության փաստը, սա հասկանալի է դառնում, քանի որ առանց մեծ ջանքերի երեխաները դրանք յուրացնում են: Սրանում համոզվեցինք կիրառելով դրանք գործնականում:

Երեխաները շատ էին հավանել տոնի ծիսական խաղերը: Խաղում էին մեծ ոգևորությամբ՝ դրսևորելով տարաբնույթ զգացմունքներ: Խաղերը ուղեկցվում

էին ծիսական երգերով: Այս երգերն ու մեղեդիները ձևավերում են երաժշտական ճաշակ, ինչը իմ կարծիքով կկասեցնի օտարամոլության մեծ թափը: Սա իմ կարծիքով, այժմէական սպառնացող աղետ է, որը տանում է ազգերի ձուլմանը, աշխարհաքաղաքացիության ձևավորմանը: ԵՎ այս շրջապտույտից դուրս կմնան միայն այն ազգերն ու պետությունները,որոնք կկարողանան պահպանել իրենց ազգային մշակույթը, որում իրենց ուրույն դերն ունեն ազգային տոներն ու ծեսերը՝ համեմված ազգային երգ ու պարով:

ԵՎ իմ խմբում քայլ առ քայլ, ամենօրյա նվիրված ու նպատակաուղղված աշխատանքի շնորհիվ, երեխաները յուրացրեցին ծեսը՝ դառնալով դրա լիիրավ մասնակիցն, կրողն ու փոխանցողը:

Ես միշտ շատ մեծ ուշադրություն եմ դարձնում երեխաների հայեցի դաստիարակությանը, հայրենասիրության սերմանմանը և իզուր չէ, որ իմ խումբը մանկապարտեզում հայտնի է, որպես «Հայրենասերների խումբ» անվամբ:

2.2 Օրինակելի պարապմունք

Խումբ՝ ավագ

Առարկա՝ խոսքի զարգացում

Թեմա՝ «Վերակենդանացնելով Կաղանդը»

Նպատակները

- **Ընդլայնել և հարստացնել բառապաշարը նոր բառերով ու բառակապակցություններով. Կաղանդ պապ, Կենաց ծառ, գժտվել:**
- **Ծանոթացնել հին հայկական տոնի սովորույթներին և դրանք երեխաների միջոցով փոխանցել ընտանիքներին:**
- **Հետամուտ լինել, որ երեխաները դաստիարակի հարցերին պատասխանեն ամբողջական նախադասություններով:**
- **Ձևավորել հասարակության մեջ ընդունելի մարդկային փոխհարաբերություններ:**
- **Պահպանել ազգային արժեքները և ձևավորել հայապահպան մտածողություն:**
- **Զարգացնել հարց տալու կարողությունը:**

Զննական պարագաներ՝

Արկղիկ, փոքր տարայով մեղր, սյուժետային նկարներ, փոքր դույլով ցորեն ու գարի, տաշտակով ջուր, փաթիլներ, ընկույզներ, չրեր, ծառի ճյուղեր, «Տարի հաց»:

Մեթոդներ՝ անհատական, զույգերով, մեծ խմբերով:

Իրականացրած ծիսական նախագիծեր՝ «Տարի հացի» թխում, «Կենաց ծառի» պատրաստում:

ԽԹԱՆՈՒՄ

Այս փուլում դաստիարակը երեխաներին ասում է, որ միասին բացահայտելու են, թե ինչպես են հնում հայերը նշել Նոր տարին: Դրա համար նա երեխաներին հրավիրում է խմբասենյակի ազատ հատվածը, որտեղ կանգնում են շրջանաձև և խաղում «Խորհրդավոր արկղիկ» խաղը: Երեխաները դաստիարակից վերցնում են արկղիկը և տալիս են նրան փակ հարցեր՝ փորձելով գուշակել դրա պարունակությունը: Այսպես հերթով արկղիկը փոխանցում են միմյանց ,մինչև գուշակելը:

-Կապ ո՞ւնի Ամանորի հետ: /այո/

-ՈՒտելի՞ք է: /այո/

-Կոնֆե՞տ է: /ոչ/ ....

Երբ երեխաները կռահում են, որ արկղիկի մեջ ամանով մեղր է,զարմանում են,թե այն ի՞նչ կապ ունի Նոր տարվա հետ:

- Հնում Ամանորի գիշերը տան անդամների բերանին մեղր են քսել, որպեսզի նրանց բերանից միայն բարի, քաղցր խեսքեր հնչեն: Ապա երեխաներից մի քանիսի բերանին տարբեր փայտիկներով մեղր է քսում:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ

Երեխաները նստում են զույգերով: Դաստիարակը գրատախտակին հերթով փակցնում է սյուժետային նկարներ և առաջարկում է դրանցից յուրաքնչյուրի վերաբերյալ կազմել մեկական նախադասություն: Ապա դրանցով ստանում են փոքրիկ պատմություն: Նկարների բովանդակությունը այսպիսին է.

1. Հայկն ու Անահիտը խաղում են գնդակով:
2. Նրանք վիճում են ու իրարից բաժանվում:
3. Երեխաները խաղում են առանձին:
4. Մոտենում է Ամանորը:
5. Հայկը դրսում սպասում է Անահիտին:
6. Երեխաները հաշտվում են և գրկախառնվում:

Դաստիարակը ամփոփում է երեխաների մտքերը և պատմում, որ հնում Ամանորից առաջ, բոլոր գժտված մարդիկ անպայման հաշտվել են և նոր միայն նշել տոնը:

-Երեխաներ դուք հավանեցի՞ք այս սովորույթները, դուք այս մասին կցանկանա՞ք պատմել ընտանիքի անդամներին:

Ապա դաստիարակը երեխաներին առաջարկում է խաղալ ամանորյա մի հին, գեղեցիկ խաղ՝ համեմված նորով /խաղը հետաքրքիր դարձնելու համար ավելացրել եմ ոտնաթաթեր/: Խմբասենյակի ազատ մասում դրված է ջրով լի մի տաշտակ: Տաշտակի դիմաց, ուղիղ գծով շարված են գունավոր ոտնաթաթեր՝ տարբեր ուղղություններով: Երեխաները զույգերով գալիս են, ամանի միջից վերցնում մի քիչ ցորեն կամ գարի, զույգ ոտքերով ցատկում են՝ նմանակելով ոտնաթաթերի ուղղություններին, վերջացնելով վազում են դեպի ջրով լի տաշտակը, իրենց ձեռքի ցորոնը լցնում դրա մեջ և ասում.

Քեզի կուտամ ցորեն, գարի,

Դուն էլ ինձի տուր բարի

Շնորհավոր Նոր տարի:

Խաղի ընթացքում հնչում է ծիսական երգ: Խաղից հետո երեխաները նստում են:

-Երեխաներ ձեզ Ամանորի գիշերը ո՞վ է նվերներ բերում: /Ձմեռ պապը/

Ապա դաստիարակը գրատախտակին փակցնում է Կաղանդ պապի նկարը.

- Հնում այս պապիկն էր երեխաներին նվերներ բերում և նրան կոչում էին Կաղանդ պապ: Երեխաներ ձեր կարծիքով նա ի՞նչ նվերներ էր բերում փոքրիկներին: /Տիկնիկ, մեքենա…/

-Հապա ուշադիր նայեք նկարին , որտե՞ղ է նրա պարկը:

Երեխաները տեսնում են, որ իսկապես Կաղանդ պապը նվերների պարկ չունի:

-Երեխաներ այս պապիկը նվերների փոխարեն բերում էր խորհուրդներ: ՈՒզո՞ւմ եք իմանալ, թե ինչ խորհուրդներ: /այո/

Դաստիարակը հերթով իր մոտ է կանչում երեխաներին, ովքեր վերցնում են իրենց դուր եկած փաթիլը և փակցնում են գրատախտակին: Դաստիարակը կարդում է փաթիլներից յուրաքանչյուրի մեջ գրված խորհուրդ-նվերը.

1. Փոխադարձ հարգանք
2. Խաղաղություն
3. Ազնվություն
4. Իմաստություն
5. Աշխատասիրություն
6. Համեստություն
7. Գոհունակություն

-Երեխաներ քանի՞ խորհուրդ ստացանք /7/, ո՞ր մուլտֆիլմում ենք հանդիպում այս թվին /«Սպիտակաձյունիկը և յոթ թզուկները»/:

Ֆիզկուլտ դադար

Խաղում են «Փաթիլ» խաղը,որը մտավոր ակտիվացնող խաղ է, որպեսզի երեխաները միայն լսողի դերում չլինեն, այլ խաղալիս նաև մտածեն, կենտրոնացնեն ուշադրությունը:

-Փաթիլները պտտվեցին 2 /երեխաները պտտվում են և երկուսով բռնում իրար ձեռք ու դառնում փաթիլ/, փաթիլները պտտվեցին 3, փաթիլները պտտվեցին 4 ....

Սրանով կապ կհաստատեն նաև մաթեմատիկայի հետ:

-Երեխաներ, ո՞րն է Ամանորի խորհրդանիշ ծառը: /Եղևնին/: Իսկ դուք գիտե՞ք, որ շատ տարիներ առաջ հայերը զարդարել են կենաց ծառի, խնկի ծառի կամ էլ ձիթենու ճյուղերը: ԵՎ զարդարել են չրերով, ընկույզով ու մրգերով: Դե եկեք մենք էլ միասին այս տարի զարդարենք մեր կենաց ծառը, մեր իսկ պատրաստած ավանդական խաղալիքներով:

Կենաց ծառը զարդարելուց հետո, կատարում են ևս մեկ ավանդական սովորույթ: Երեխաները մեկ օր առաջ դաստիարակի հետ պատրաստել են «Տարի հացը»՝ դրա մեջ թաքցնելով դովլաթը: Պարապմունքին տղաներից մեկի մեջքին կտրում են այն՝ վերջում բաժանում երեխաներին: Սա մեծ ոգևորություն է առաջացնում երեխաների մոտ, որովհետև նրանք մասնակցել են այդ ամբողջ գործընթացին և վայելելու են իրենց պատրաստածը:

-Երեխաներ կուտեք զգուշությամբ, որովհետև դրա մեջ թաքցրել ենք դովլաթը և ում այն բաժին ընկնի, թող կանգնի և մեզ ցույց տա այն: /«Տարի հացը» վայելում են պարապմունքից հետո/:

ԿՇՌԱԴԱՏՄԱՆ ՓՈՒԼ

Դաստիարակը պարապմունքը ավարտում է «Դեմ առ դեմ շրջաններերով»:

-Մի բան, որ դուք սովորեցիք, մտապահեցիք հին ավանդական Նոր տարուց և կպատմեք տանը: /Այս մեթոդի շնորհիվ երեխաները մի սովերույթ կփոխանցեն իրենց ընտանիքներին/:

2.3 Դիտարկման արդյունքները

Պարապմունքը մեթոդապես ճիշտ էր կառուցված, պահպանված էին ԽԻԿ համակարգի փուլերը: Նպատակաուղղված և պլանավորված պարապմունքի շնորհիվ երեխաները ծանոթացան ազգային տոնին և նրանց մոտ ընդլայնվեց շրջակա աշխարհի մասին պատկերացումները: Դաստիարակի հետևողական աշխատանքի շնորհիվ չեն մոռացվի ազգային արժեքները: Պարապմունքը իրականացվում էր խաղերով, քանի որ խաղերը համարվում են երեխաների ուսուցման և դաստիարակման բաղկացուցիչ մասը: Դաստիարակը նպաստում էր երեխաների ինքնուրույնությանը, որն էլ նրանց զարգացման և անձնավորության ձևավորման կարևոր գործոնն է: Պարապմունքի ընթավքում դաստիարակը ապահովել էր երեխաների ֆիզիկական ակտիվությունը՝ խաղերով, ֆիզկուլտ դադարով, սովորույթների իրականացմամբ: Պարապմունքը արդյունավետ էր և նպաստում էր երեխաների գրեթե բոլոր ոլորտների զարգացմանը:

Դաստիարակը հասավ իր առջև դրված նպատակներին: Նա ուներ գրագետ խոսք, օգտագործում էր դիմախաղ, շարժուձև:

Պարապմունքը գնահատվեց «գերազանց»:

Տնօրեն՝ Ռուզաննա Աբովյան

Պարապմունքը անցկացվեց ավագ խմբում՝ խոսքի զարգացում առարկայից, դաստիարակ՝ Անի Պետրոսյանի կողմից:

Թեմա՝ «Վերակենդանացնելով Կաղանդը»:

Ծանոթացնել ազգային տոնին, դաստիարակել ազգային ավանդույթներ:

Պարապմունքը մեթոդապես ճիշտ էր կառուցված, պահպանված էին փուլերը: Պարապմունքը հագեցած էր բազմաթիվ թեմատիկ դիդակտիկ նյութերով:Երեխաների համար ստեղծված էր համապատասխան միջավայր, նրանք ցուցաբերում էին հետաքրքրություն թեմայի վերաբերյալ, որն էլ իր հերթին նպաստում էր, որ երեխաները ավելի ուշադիր և հաճույքով ներգրավեն պարապմունքին: Երեխաներին ակտիվացրեց «Խորհրդավոր արկղիկ» խաղը: Դաստիարակն միևնույն թեմայի շուրջ տարբեր գործունեությունների միջոցով իրականացրեց իր առջև դրված նպատակները: Երեխաները ամբողջությամբ ներգրավված էին պարապմունքի մեջ, ցուցաբերում էին ակտիվություն, պատասխանում էին իրենց ուղղված հարցերին՝տրամաբանորեն կապակցված նախադասություններով:

Դաստիարակն պարապմունքի ընթացքում մրջառարկայական կապեր է ստեղծել մաթեմատիկայի հետ:

Դաստիարակի կողմից հետազոտվող թեմայի կարևորությունը մեծ է, այն նպաստում է ազգապահպանության խնդիրների լուծմանը: Դաստիարակը շարունակեց ձևավորել բարոյագիտական արժեքներ /ներողամտություն, բարություն, ընկերասիրություն/, որոնք նպաստում են անձի արժեհամակարգի ձևավորմանը:

Պարապմունքի ընթացքում դաստիարակը կիրառեց «Դեմ առ դեմ» շրջանների մեթոդը, որի միջոցով երեխաների մոտ ձևավորվում և զարգանում է կապակցված խոսքը, երկխոսությունը, զույգերով աշխատերու, միմյանց լսելու, սեփական կարծիքը արտահայտելու կարողությունները: Դաստիարակը հասավ իր առջև դրված նպատակին: Գնահատվեց «գերազանց»:

Մեթոդիստ՝ Վարդուհի Դալլաքյան

Պարապմունքի կառուցվածքը մեթոդապես ճիշտ էր: Արդյունավետ և ճիշտ ընտրված մեթոդները նպաստոցին երեխաների ակտիվ մասնակցությանը: Կիրառվեց հետաքրքիր ֆիզկուլտ դադար: Պարապմունքը հագեցած էր զննական պարագաներով, դիդակտիկ նյութերով:

Դաստիարակը հասավ իր նպատակին՝ երեխաներին տալով գրտելիքներ հին հայկական տոնի սովորույթների մասին: Նախադպրոցական տարիքում հայապահպան մտածողության դաստիարակումը, ազգային արժեքների պահպանումն ու փոխանցումն արդիական ու կարևոր թեմաներից մեկն է:

Պարապմունքնը գնահատել «գերազանց»:

Դաստիարակ՝ Հերիքնազ Մելքոնյան

IV. Եզրակացություն

Այսպիսով, հետազոտական աշխատանքն իրականացնելիս, եկա այն եզրահանգման, որ ուսումնական գործընթացի ցանկացած խնդրի լուծում կարելի է իրագործել ծեսի իրականացման ընթացքում, քանի որ այն իրականացնելիս զարգանում է երեխաների և խոսքը, և շարժողական, և հուզական, և իմացական ու ինքնքսպասարկման ոլորտները: Բայց որպեսզի այս ոլորտները դրսևորվեն, երեխաները պետք է դառնան ծեսի ակտիվ մասնակից ու կատարող և դրանով բացահայտեն ազգապահպանության համար կարևոր նախադրյալ հանդիսացող ծեսերը: Կատարված հատազոտական աշխատանքում հստակ երևում է, որ երեխաները հանդիսանում են այդ ծեսի տարածման մի օղակ, որոնք մանկապարտեզից ընտանիք են փոխանցում բազմաթիվ մոռացված ավանդույթներ: Ես հետազոտական աշխատանքի ընթացքում հասա իմ նպատակին՝ այն է. նախադպրոցական տարիքում երեխաների առջև դրված խնդիրը՝ ազգային ծեսերի ու տոների յուրացումն ու տարածումը, արդարացված է:

Ես բացահայտեցի, որ ազգային ծեսերը չեն կորցրել իրենց արժեքն ու կարևորությունը, ուղղակի պետք է գիտենալ՝ ինչը ու ինչպես պետք է վերցնել և ուսուցանել:

Ես կառաջարկեի, որ այս տարի բոլոր մանկապարտեզներում ու հայկական օջախներում նշեին ավանդական Կաղանդը, այն շատ յուրօրինակ կլիներ, կստեղծվեր դրական զգացումներով հաճելի միջավայր, որը զուրկ կլիներ այժմէական ցուցադրական մրցավազքից ու սթրեսներից: Բոլորիս մաղթում եմ խաղաղ ու հաճելի Ամանոր:

V. Գրականության ցանկ

1. Ռ. Ռստակյան «Հայկական ծեսերը»
2. Լ. Զախարյան «Ազգային ծեսերը և տեխնոլոգիայի դասերը, որպես երեխայի զարգացման միջոց» Երևան 2019
3. Այլընտրանքային մոդելներով 5-6 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության կազմակերպումը. Դաստիարակի ուղեցույց, Երևան 2010
4. Նախաշավիղ 1.2011
5. Հ. Խառատյան-Առաքելյան «Հայ ժողովրդական տոները»
6. АМИ Новости-Армения https://newsarmenia.am/cards/
7. Armenia Discovery https://armeniadiscovery.com/trndez